ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/56/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **12 մայիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի մայիսի 12-ին քննելով «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության խորհրդի անդամ էդուարդ Արտյուշի Հովհաննիսյանի կողմից կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/56/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ և 28-րդ կետերով վերապահված լիազորությունների շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև

Սահմանադրական օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացրել է «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության (այսուհետ նաև՝ Կուսակցություն) 2023 և 2024 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգում: Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվությամբ ներկայացված 80,000 ՀՀ դրամի չափով նվիրատվության արժանահավատությունը, մասնավորապես այն կատարելու համար դրամական միջոցներ ունենալը Էդուարդ Հովհաննիսյանի օրինական եկամուտներով հիմնավորված լինելու հանգամանքը պարզելու համար վերջինիս կողմից Հանձնաժողով ներկայացված՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի ստուգման արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է հետևյալը.

1) Էդուարդ Հովհաննիսյանի Հայտարարագրում որպես ստացված եկամուտ հայտարարագրվել է ընդհանուր՝ 110,696,778 ՀՀ դրամ գումար, ինչպիսի տվյալները հաստատվել են ՀՀ ՊԵԿ տեղեկատվական շտեմարանում առկա տվյալներով, սակայն Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնում առկա չեն տեղեկություններ դրամական միջոցների (կանխիկ և անկանխիկ) վերաբերյալ:

2) ՔԿԱԳ էլեկտրոնային շտեմարանում առկա տեղեկությունները և Էդուարդ Հովհաննիսյանի կողմից հայտարարգրված տվյալները համադրելու արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Էդուարդ Հովհաննիսյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրի «Ա.2. հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում առկա չեն տեղեկություններ վերջինիս ընտանիքի անդամների վերաբերյալ:

3) ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանում առկա տեղեկությունների համաձայն՝ Էդուարդ Հովհաննիսյանը 2020 թվականի դեկտեմբերի 10-ից հանդիսանում է «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար: Սակայն վերջինիս կողմից Հանձնաժողով ներկայացված Հ այտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ում ունեցած մասնակցության վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

1.2 2026 թվականի հունվարի 8-ի թիվ Մ-46-2026 գրությամբ Էդուարդ Հովհաննիսյանը Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում), որի համաձայն՝

վերջինս հայտնել է, որ դրամական միջոցների բաժնում տվյալների բացակայությունը չի ունեցել որևէ տեղեկություն թաքցնելու կամ եկամուտները թերի ներկայացնելու նպատակ: Անհրաժեշտության դեպքում պատրաստ է բանկային կազմակերպություններից և հաշվապահից ստանալ և ներկայացնել ճշգրտված տվյալներ:

Ընտանիքի անդամների վերաբերյալ Հայտարարագրում տեղեկություններ չներկայացնելու վերաբերյալ՝ ներկայացված Պարզաբանմամբ Էդուարդ Հովհաննիսյանը հայտնել է, որ իր ընտանիքի կազմը փոփոխության չի ենթարկվել և ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների բացակայությունը պայմանավորված է եղել զուտ անուշադրությամբ և չի ունեցել տվյալների թաքցնելու դիտավորություն:

«Բի-Թի-Էս» ՍՊԸ-ում իր մասնակցության վերաբերյալ տվյալների բացակայության մասով հայտնել է, որ նշված հանգամանքը պայմանավորված է «Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնի վերնագրի ընկալման թյուրըմբռնմամբ: Ընկերությունը հիմնադրվել է 2020 թվականին, օրինական կերպով գրանցված է, հարկերը և պարտադիր վճարները վճարվում են, իսկ ստացված շահաբաժինները համապատասխան տարիների հայտարարագրերում արտացոլված են: Անհրաժեշտության դեպքում պատրաստ է ներկայացնել կամ ճշգրտել ընկերությունում իր մասնակցության վերաբերյալ ամբողջական տվյալները: Միաժամանակ հայտնել է, որ արձանագրված անհամապատասխանությունները պայմանավորված են եղել տեխնիկական, ձևակերպման կամ իրազեկվածության բացակայության հանգամանքներով, և չի ունեցել տվյալները թաքցնելու կամ օրենքի պահանջների խախտման դիտավորություն:

1.3 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2026 թվականի ապրիլի 17-ին Էդուարդ Հովհաննիսյանին հասցեագրել է թիվ 01/1089-2026 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:30-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված ծանուցումը Էդուարդ Հովհաննիսյանի կողմից ստացվել է 2026 թվականի ապրիլի 20-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում):

1.4 2026 թվականի ապրիլի 23-ին պատշաճ ծանուցված Էդուարդ Հովհաննիսյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 70/26 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 2026 թվականի ապրիլի 28-ին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում, Էդուարդ Հովհաննիսյանի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել միջնորդություն՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու նպատակով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ:

1.6 Էդուարդ Հովհաննիսյանի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարվել է և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը տեղափոխվել է 2026 թվականի մայիսի 12-ին՝ ժամը 15:00-ին, որի մասին Էդուարդ Հովհաննիսյանը պատշաճ ծանուցվել է:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Էդուարդ Հովհաննիսյանի բացակայությամբ 2026 թվականի մայիսի 12-ին՝ ժամը 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Էդուարդ Հովհաննիսյանը 2026 թվականի ապրիլի 28-ին տեղի ունեցած վարչական վարույթի լսումների ժամանակ ներկայացրել է պարզաբանումներ: Մասնավորապես, հայտնել է, որ Հայտարարագրի լրացման պահին չի հիշել, թե 2023 թվականին որքան դրամական միջոցներ է ունեցել, քանի որ երկար ժամանակ է անցել, բացի այդ նշված ժամանակահատվածում իր դրամական միջոցները եղել են կանխիկ, այդ թվում՝ «Բի-Թի-Էս» ՍՊԸ-ից ստացված շահաբաժինը ու անհնար է հիշել նման տվյալներ, հետևաբար Հայտարարագիրը լրացնելու պահին իր՝ 2023 թվականին ունեցած կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալները չի նշել չհիշելու, դրանց կարևորություն չտալու արդյունքում, սակայն չի ունեցել այդ տվյալները թաքցնելու դիտավորություն, քանի որ դրամական միջոցների մասին տվյալները իր կողմից արդեն իսկ ներկայացվել են:

Կնոջ և երեխաների վերաբերյալ տվյալների բացակայության մասին հայտնել է, որ «ԵՍ ԵՄ» ազգային նույնականացման հարթակում բացակայում են իր երեխաներից միայն մեկի վերաբերյալ տվյալները, իսկ ընտանիքի մյուս անդամների վերաբերյալ տվյալները նշված հարթակում առկա են, բացի այդ գտնում է, որ իր կնոջ և երեխաների վերաբերյալ տվյալները պետությանը հայտնի փաստեր են, քանի որ արտացոլված են ամուսնության և ծննդյան վկայականներում, որոնք պետական մարմնի կողմից տրամադրված փաստաթղթեր են, հետևաբար Հայտարարագրում դրանք չնշելով դիտավորություն չի ունեցել թաքցնել տվյալները: «Բի-Թի-Էս» ՍՊԸ-ում իր մասնակցության վերաբերյալ տվյալների բացակայության մասով Էդուարդ Հովհաննիսյանը գործի քննության ժամանակ ևս հայտնել է, որ նշված հանգամանքը պայմանավորված է Հայտարարագրի համապատասխան բաժնի վերնագրի թյուրըմբռնմամբ և չի ենթադրել, որ նշված բաժնում անհրաժեշտ է նշել ՀՀ-ում հիմնադրված ընկերությունում իր մասնակցության մասին տվյալները, քանի որ դա ևս պետությանը հայտնի փաստ է: Էդուարդ Հովհաննիսյանը նաև հայտնել է, որ ներկայում չի հանդիսանում «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության անդամ:

Էդուարդ Հովհաննիսյանը նաև պատրաստակամություն է հայտնել ներկայացնել իր պարզաբանումները հիմնավորող փաստաթղթեր:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/56/2026 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Էդուարդ Հովհաննիսյանը 2021 թվականի մայիսի 2-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 26-ը հանդիսացել է «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության խորհրդի անդամ, ինչով պայմանավորված հանդիսացել է Սահմանադրական օրենքով նախատեսված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.2 Էդուարդ Հովհաննիսյանի Հայտարարագրում որպես ստացված եկամուտ հայտարարգրվել է ընդհանուր՝ 110,696,778 ՀՀ դրամ գումար, ինչպիսի տվյալները հաստատվել

են ՀՀ ՊԵԿ տեղեկատվական շտեմարանում առկա տվյալներով, սակայն Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնում առկա չեն տեղեկություններ դրամական միջոցների (կանխիկ և անկանխիկ) վերաբերյալ:

3.3 ՔԿԱԳ էլեկտրոնային շտեմարանում առկա տեղեկությունները և Էդուարդ Հովհաննիսյանի կողմից հայտարարգրված տվյալները համադրելու արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Էդուարդ Հովհաննիսյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրում «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում առկա չեն տեղեկություններ վերջինիս ընտանիքի անդամների վերաբերյալ:

3.4 ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանում առկա տեղեկությունների համաձայն՝ Էդուարդ Հովհաննիսյանը 2020 թվականի դեկտեմբերի 10-ից հանդիսանում է «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար: Սակայն վերջինիս կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի տարեկան հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ում ունեցած մասնակցության վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

3.5 2026 թվականի մայիսի 11-ին Էդուարդ Հովհաննիսյանը էլեկտրոնային փոստի միջոցով Հանձնաժողով է ներկայացրել փաստաթղթեր, մասնավորապես՝ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մասին տեղեկանք, փոխանցման անդորրագրեր, ինչպես նաև «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ի հարկային հաշվարկները:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր, որի ձևանմուշը և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.2 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, բացառությամբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների:

4.4 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի (Հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալները) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը).

4.5 Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ:

4.6 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը:

4.7 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության խորհրդի անդամ էդուարդ Հովհաննիսյանը Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ՝

Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալ, այն է Հայտարարագրում չի ներկայացրել տեղեկություններ իր դրամական միջոցների (կանխիկ և անկանխիկ) վերաբերյալ, իր ընտանիքի անդամների վերաբերյալ, ինչպես նաև «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ում ունեցած մասնակցության վերաբերյալ:

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել կուսակցությունների գործունեության թափանցիկության ամբողջականությունը և բացառելու կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի առանձին անդամներին ֆինանսավորելու միջոցով կամ նրանց անունով գույքի ձևակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելը՝ այդպիսով ապահովելով կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկությունը և վերջիններիս անկախությունը մասնավոր շահերից:

Տվյալ դեպքում, Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվությամբ ներկայացված չափով նվիրատվության արժանահավատությունը, մասնավորապես այն կատարելու համար դրամական միջոցներ ունենալը Էդուարդ Հովհաննիսյանի օրինական եկամուտներով հիմնավորված լինելու հանգամանքը պարզելու համար վերջինիս կողմից Հանձնաժողով ներկայացված՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի ստուգման արդյունքում պարզվել է, որ Էդուարդ Հովհաննիսյանը չի հայտարարագրել իր ընտանիքի անդամների՝ կնոջ և երկու երեխաների վերաբերյալ տվյալները, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն: Բացի այդ, վերջինս չի հայտարարագրել իր դրամական միջոցները (այդ թվում՝ անկանխիկ), ինչպես նաև «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ում ունեցած մասնակցության վերաբերյալ տեղեկությունները, որի արդյունքում խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերով սահմանված պահանջները: Արդյունքում, թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք:

Էդուարդ Հովհաննիսյանի կողմից իր կնոջ և երկու երեխաների մասին տվյալները, Հայտարարագրի «Ա.2. հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չներառելու, իսկ ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ում ունեցած մասնակցության մասին տվյալները Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չներառելու վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Հանձնաժողովն իր կողմից նախկինում կայացված որոշմամբ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ նվազ նշանակության է գնահատում այն դեպքերը, երբ հայտարարագրում չներառված տվյալներն այլ կերպ հասանելի են եղել Հանձնաժողովի համար (տես՝ 2025 թվականի մայիսի 21-ի ՎԻՎ/131/2025 գործը):

Սույն դեպքում Էդուարդ Հովհաննիսյանի ընտանիքի անդամների մասին տվյալներն այլ կերպ բացահայտվել են և հասանելի են Հանձնաժողովին: Մասնավորապես, Էդուարդ Հովհաննիսյանի կնոջ վերաբերյալ տվյալները բացահայտվել են իր կողմից ներկայացված Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում առկա տվյալների (նշված է Մարինե Բարսեղյանի հետ համատեղ սեփականությամբ անշարժ գույքերի առկայության փաստը՝ հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը նշված է՝ ամուսիններ), ինչպես նաև ՔԿԱԳ

տվյալների շտեմարանում առկա տվյալների (հիմք՝ Ամուսնության պետական գրանցման մասին [redacted] ակտը) միջոցով, իսկ երեխաների մասին տվյալները ևս բացահատվել են և հասանելի են հանձնաժողովին ՔԿԱԳ տվյալների շտեմարանի միջոցով (հիմք՝ Ծննդի պետական գրանցման մասին [redacted] և [redacted] ակտերը), համաձայն որի վերջիններս անչափահաս են:

Միաժամանակ, Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Էդուարդ Հովհաննիսյանը հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ է հանդիսանում «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության խորհրդի անդամ լինելու հանգամանքով պայմանավորված, իսկ Սահմանադրական օրենքը կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի ընտանիքի անդամների համար չի նախատեսում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, ի տարբերություն «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների, որոնց համար նախատեսված է այդպիսի պարտականություն և այն չկատարելը առաջացնում է իրավական հետևանքներ: Ընդ որում, Հանձնաժողովն արձանագրում է, որ պաշտոնատար անձի ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների հայտարարագրումը նաև նպատակ է հետապնդում բացահայտել վերջիններիս շահերը և այդկերպ կանխարգելել շահերի բախման հնարավոր իրավիճակները: Սակայն կուսակցության պաշտոնատար անձանց դեպքում օրենսդիրը չի նախատեսել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Ուստի՝ վերջիններիս ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալները հայտարարագրելու օրենսդրական նպատակն էապես տարբերվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով պաշտոնատար անձանց դեպքից և չի կարող դիտարկվել որպես հայտարարագրման ինստիտուտի հիմնական նպատակների խախտում: Հետևաբար, հաշվի առնելով, որ **քննարկվող դեպքը վերաբերում է կուսակցության ղեկավար մարմնի անդամի կողմից իր ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալները չհայտարարագրելուն**, ինչպես նաև այն հանգամանքը, որ կնոջ տվյալներն այլ կերպ բացահայտվել են Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում և ՔԿԱԳ տվյալների շտեմարանում առկա տվյալների միջոցով, իսկ երեխաներն անչափահաս են և նրանց տվյալները ևս բացահայտվել են ՔԿԱԳ տվյալների շտեմարանում առկա տվյալների միջոցով, ուստի նշված

հանգամանքների համաժամանակյա առկայության պայմաններում Հանձնաժողովը Էդուարդ Հովհաննիսյանի կողմից իր ընտանիքի անդամների տվյալները չհայտարարագրելը գնահատում է նվազ նշանակության:

Իսկ Էդուարդ Հովհաննիսյանի կողմից «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ում ունեցած մասնակցության վերաբերյալ տվյալները ևս այլ կերպ, մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանում առկա տեղեկությունների, ինչպես նաև՝ Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատուի եկամուտներ» բաժնում ներկայացված տվյալների (նշված է «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ում շահաբաժին ունենալու հանգամանքը) միջոցով բացահայտվել են Հանձնաժողովի և հանրության համար:

Ինչ վերաբերում է Էդուարդ Հովհաննիսյանի կողմից Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնում համապատասխան տվյալներ չլրացնելուն, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքով մի շարք հանգամանքների **համաժամանակյա առկայությամբ** պայմանավորված Էդուարդ Հովհաննիսյանի կողմից այդ տվյալները չներկայացնելու արդյունքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով վերջինիս նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը կդիտարկվի համաչափ:

- Մասնավորապես, կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում բացառել կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի առանձին անդամներին ֆինանսավորելու միջոցով կամ նրանց անունով գույքի ձևակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելու հնարավորությունը՝ այդպիսով ապահովելով կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկությունը և վերջիններիս անկախությունը մասնավոր շահերից: Այդպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ կուսակցության ղեկավար մարմնի անդամների՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը ծառայում է որպես գործիք, որ ապահովի **կուսակցության ֆինանսական գործունեության թափանցիկությունը:**

Տվյալ դեպքում Էդուարդ Հովհաննիսյանի կողմից 2023 թվականի ընթացքում «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցությանը կատարվել է ընդհանուր 80,000 ՀՀ դրամի չափով

նվիրատվություն, ինչի արժանահավատությունը պարզելու նպատակով էլ իրականացվել է ուսումնասիրություն Հանձնաժողովի կողմից: Էդուարդ Հովհաննիսյանի կողմից ներկայացված, ինչպես նաև՝ Հանձնաժողովին հասանելի տվյալների համադրության արդյունքում պարզ է դառնում, որ Էդուարդ Հովհաննիսյանի ֆինանսական դրությունը ողջամտորեն հնարավորություն տալիս էր Էդուարդ Հովհաննիսյանին 2023 թվականին կուսակցությանը կատարել ընդհանուր 80,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն, իսկ նման տվյալների առկայության պայմաններում ողջամտորեն չի հիմնավորվում, որ առկա է ռիսկ առ այն, որ Էդուարդ Հովհաննիսյանին ֆինանսավորելու միջոցով կամ նրա անունով գույքի ձևակերպման միջոցով շրջանցվել է կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ իրականացված ուսումնասիրության նպատակն ու առարկան չեն սահմանափակվել բացառապես այն ռիսկի գնահատմամբ, թե արդյո՞ք Էդուարդ Հովհաննիսյանի կողմից կամ նրա անունով իրականացվել է կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ իրավակարգավորումների հնարավոր շրջանցում: Ուսումնասիրության շրջանակում համակողմանիորեն գնահատվել են նաև այլ հանգամանքներ, այդ թվում՝ նվիրատվության իրականացման ֆինանսական աղբյուրների՝ նվիրատուի եկամուտների օրինականությունը, ինչպես նաև կատարված նվիրատվության համապատասխանությունը գործող իրավական պահանջներին: Ուստի, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Էդուարդ Հովհաննիսյանը Հայտարարագրի շրջանակներում ներկայացրել է իր եկամուտների (այդ թվում՝ շահաբաժնի տեսքով) վերաբերյալ տվյալները՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության ֆինանսական գործունեության թափանցիկության վերաբերյալ կասկած չի հարուցվում Հայտարարագրի շրջանակներում ներկայացված, ինչպես նաև՝ Հանձնաժողովին հասանելի տվյալների պայմաններում:

- Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը Էդուարդ Հովհաննիսյանի կողմից թույլ տրված իրավախախտումը նվազ նշանակության գնահատելիս հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ թեև Էդուարդ Հովհաննիսյանը 2023 թվականին հանդիսացել է «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության խորհրդի անդամ, սակայն նրա լիազորությունները դադարեցվել են 2024 թվականի օգոստոսի 26-ից սկսած, հետևաբար ներկայում այլևս չի

հանդիսանում կուսակցության պաշտոնատար անձ, ինչպես նաև չի հանդիսանում կուսակցության անդամ, ուստի նման հանգամանքներում բացակայում է Էդուարդ Հովհաննիսյանի՝ կուսակցության գործունեության վրա իր զբաղեցրած պաշտոնից բխող ազդեցությունը օգտագործելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ՝ վերջինիս, որպես կուսակցության ղեկավար մարմնի անդամի, ֆինանսավորելու միջոցով կամ նրա անունով գույքի ձևակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելու հնարավորությունը փաստացի դադարել է, ինչի պայմաններում էապես նվազել է տվյալ արարքի և անձի հասարակական վտանգավորության աստիճանը:

Այսպիսով, թեև ձևական առումով առկա է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը, այնուամենայնիվ՝ բացթողումը չի հանգեցրել հանրային շահի էական վնասման կամ թափանցիկության սկզբունքի խախտման:

- Միաժամանակ, Էդուարդ Հովհաննիսյանի կողմից Հանձնաժողով են ներկայացվել 2023 թվականի ընթացքում իր կողմից կատարված անկանխիկ գործարքների անդորրագրեր, «ԲԻ-ԹԻ-ԷՍ» ՍՊԸ-ի 2023 թվականի հարկային հաշվարկները, որոնք ներառում են նշված ընկերությունից Էդուարդ Հովհաննիսյանի կողմից ստացված աշխատավարձի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վերաբերյալ տեղեկանք, որը ներառում է նաև 2023 թվականի ընթացքում Էդուարդ Հովհաննիսյանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների մասին տեղեկատվություն: 2023 թվականի ընթացքում իր ունեցած կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ վերջինս հայտնել է, որ չի հիշում, թե որքան են կազմել իր կանխիկ դրամական միջոցները նշված ժամանակահատվածում: Ուստի, նման պայմաններում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայտարարագրման ենթակա կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների հստակ չափը հնարավոր չի եղել պարզել, Էդուարդ Հովհաննիսյանի դրամական միջոցների վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը մեկնաբանվում է ի օգուտ իրեն:

- Բացի այդ, Էդուարդ Հովհաննիսյանի կողմից Հանձնաժողով են ներկայացվել 2023 թվականի ընթացքում կատարված անկանխիկ գործարքների անդորրագրերը, «ԲԻ-ԹԻ-ԷՍ»

ՍՊԸ-ի 2023 թվականի հարկային հաշվարկները, որոնք ներառում են նշված ընկերությունից ստացված աշխատավարձի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վերաբերյալ տեղեկանքը: 2023 թվականի ընթացքում ունեցած կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ վերջինս հայտնել է, որ չի հիշում դրանց հստակ չափը: Ուստի, հաշվի առնելով, որ հայտարարագրման ենթակա կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների հստակ չափը հնարավոր չի եղել պարզել և չհայտարարագրված տվյալներին վերաբերող հանգամանքները բացահայտվել են բացառապես անձի կողմից ներկայացված պարզաբանումների և կամովին տրամադրված փաստաթղթերի հիման վրա: Հանձնաժողովի գնահատմամբ, վարչական վարույթի շրջանակներում անձի դրսևորված բարեխիղճ համագործակցության պայմաններում բացառապես անձի կողմից տրամադրված տեղեկությունները չեն կարող դրվել նրան պատասխանատվության ենթարկելու հիմքում, քանի որ նման մոտեցումը կհակասի վարչարարության համաչափության սկզբունքին:

- Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում հատուկ անդրադառնալ դրամական միջոցների կանխիկ եղանակով տնօրինելու հանգամանքին: Թեև նմանատիպ վարույթների, ինչպես նաև հայտարարագրերի ստուգման և վերլուծության շրջանակներում Հանձնաժողովը կանխիկ դրամական միջոցների տնօրինումը դիտարկում է որպես ռիսկային գործոն և դրա նկատմամբ կիրառում վերահսկողության հատուկ կառուցակարգեր, սակայն սույն դեպքում արձանագրվում է, որ տվյալ դրամական միջոցների ձևավորման աղբյուրները կասկած չեն հարուցում: Մասնավորապես, այդ միջոցների գոյացման հիմքերը հասանելի են եղել Հանձնաժողովին և ուղղակիորեն արտացոլված են եղել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում, ինչը հնարավորություն է ընձեռել հավաստել դրանց օրինական ծագումը և չեզոքացնել կանխիկ եղանակով տնօրինման հետ կապված ռիսկերը:

Վերոգրյալ փաստական հանգամանքների և իրավական հիմնավորումների համակցությամբ, Հանձնաժողովը գտնում է, որ «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության խորհրդի անդամ էդուարդ Հովհաննիսյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով,

Օրենսգրքի 21-րդ հոդվածով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Էդուարդ Հովհաննիսյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդուարդ Հովհաննիսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Էդուարդ Հովհաննիսյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ